«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Հարգելի՛ գործընկեր,

2023 թվականի նոյեմբերի 16–17–ը կանցկացվի «Սպորտ, առողջություն, կրթություն» խորագրով ուսանողական գիտաժողով՝ հետևյալ ուղղություններով՝

1. Օլիմպիական սպորտ. օլիմպիզմը, օլիմպիական կրթությունը և ժառանգությունը ժամանակակից սպորտում
2. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժական հիմնախնդիրները
3. Հոգեբանական մտքի զարգացումը սպորտային գործունեության համատեքստում
4. Սպորտային գործունեության և առողջ ապրելակերպի բժշկակենսաբանական հայեցակետերը
5. Ֆիզիկական վերականգնումը սպորտում
6. Ադապտիվ սպորտը ժամանակակից աշխարհում
7. Սպորտային տուրիզմի զարգացման հեռանկարները
8. Նորարարական տեխնոլոգիաները սպորտի կառավարման գործընթացում

Նյութերին ներկայացվող պահանջները

1.Վերևում՝ էջի կենտրոնում, մեծատառերով գրվում է հոդվածի վերնագիրը՝ թավ (bold),

- 1 ինտերվալ ներքև՝ հոդվածի հեղինակի ֆակուլտետը, ամբիոնը, կուրսը, անունը, ազգանունը՝ լրիվ՝ թավ (bold),
- 1 ինտերվալ ներքև՝ գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ՝ թավ (bold),
- 1 ինտերվալ ներքև՝ աջից՝ կազմակերպության, քաղաքի, երկրի անվանումները՝ թավ (bold),
- առանձին պարբերությամբ նշվում են նյութի առանցքային բառերը և բառակապակցությունները (5-8 բառ), մեկ ինտերվալ ներքև՝ բուն տեքստը:

2. Հոդվածի ծավալը՝ 3-5 լրիվ էջ (ներառյալ աղյուսակներ, տրամագրեր):

- Տեքստի ձևաչափը՝ A4 ֆորմատի թուղթ (210x297 մմ), MS Word 2007, տառատեսակը՝ GHEA Grapalat (հայերեն), Times New Roman (ռուսերեն և անգլերեն), տառաչափը՝ 12, տեքստը՝ էջի լայնությամբ հավասարեցված, առանց տողադարձերի:
- Միջտողային տարածությունը՝ 1, էջի յուրաքանչյուր կողմից 2 սմ լուսանցք:

Տեքստի կառուցվածքը

- Առանցքային բառեր:
- Հետազոտության արդիականություն.

ներառում է հիմնախնդրի ուսումնասիրության կարևորությունը, վիճակը և դրա արտացոլումը գրական աղբյուրներում:

- Հետազոտության նպատակը, խնդիրները:
- Հետազոտության մեթոդները և կազմակերպումը.

նշվում են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները՝ մեկ տողով, օգտագործված սարքեր, քանակակազմ, հետազոտության կազմակերպում (վայրը, տևողությունը, ժամանակահատվածը):

- Հետազոտության արդյունքների վերլուծություն.

ներկայացվում են և վերլուծվում հետազոտության արդյունքում ստացված տվյալները, փաստերը, տրվում աղյուսակներ և տրամագրեր՝ խիստ անհրաժեշտության դեպքում (ընդհանուր՝ 2–ից ոչ ավելի):

- Եզրակացություն.

ներկայացվում են հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կատարված եզրահանգումները՝ չկրկնելով հոդվածի այլ բաժիններում տրված ձևակերպումները (կարելի է ներկայացնել նաև առաջարկություններ):

• Գրականություն.
ըստ այբբենական կարգի՝ համարակալված ներկայացվում է 3–5 գրական աղբյուր: Սկզբից տրվում են հոդվածի լեզվով աղբյուրները, որից հետո՝ օտարալեզու: Հղումները տեքստում կատարվում են քառակուսի փակագծերում՝ նշելով գրականության աղբյուրի հերթական համարը, օրինակ՝ [2] կամ [1,3]:
Հոդվածի վերջում կարող եք շնորհակալություն հայտնել Ձեր գիտական ղեկավարին՝ հոդվածի պատրաստման գիտական աշխատանքներում աջակցելու համար:
Լավագույն աշխատանքները հրատարակվելու են «Սպորտ, առողջություն, կրթություն» ուսանողական գիտական տարեգրքում:

Նյութերը ներկայացնել մինչև սեպտեմբերի 30-ը՝ էլեկտրոնային և 1 օրինակ տպագիր տարբերակով՝ հետևյալ հասցեով՝ Երևան 0070, Ալեք Մանուկյան 11, 2–րդ հարկ՝ Գիտահամակարգող բաժին, Երանուհի Սիմոնյան:
Հեռախոս՝ (010) 55 33 10 (1 64), 093 36 89 19:
Էլ. հասցե՝ Eranuhi.Simonyan@sportedu.am:

Ձևակերպման օրինակ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՐՏԱՌՃԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

ՄՄ ֆակուլտետ, Ծանրամարտի, բռնցքամարտի և
սուսերամարտի ամբիոն, 4-րդ կուրս, Միսակ Սարգսյան,
Գիտական ղեկավար՝ մ.գ.թ., ասիստենտ Ա. Շախյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,
Երևան, Հայաստան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Յու.Գ., Չատինյան Ա.Ա., Կարապետյան Ի.Ք., Ֆիզիկական կուլտուրայի անհրաժեշտությունն ուսանողների տեսանկյունից, Հանրապետական 29-րդ գիտամեթոդական կոնֆերանսի թեզիսներ, Երևան, 2002, էջ 15:
2. Ղազարյան Ֆ. Գ., Սպորտային պատրաստության հիմունքները,Դասագիրք, Երևան, Ջոքեր հրատ., 1993, 212 էջ:
3. Терехина Р.Н., Уровень специальной подготовленности лидеров гимнастического помоста в первый год олимпийского цикла / Р.Н. Терехина, С.В. Борсиенко, Н.Н. Коврижных // Ученые записки университета имени П. Ф. Лесгафта. – 2017. – № 10 (152). – С. 244-248.
4. Dowling M., Edwards J. & Washington M., Understanding the Concept of Professionalisation in Sport Management Research, Sport Management Review, 2014; 17(4)p. 520–529.
5. http://media.miu.by/files/store/items/lifelong/11/11_life_long_learning_5_10.pdf